

ԳԹՈՒԹԵՆ ՔՈՅՐԵՐ

(Ուղեւորի օրագրից)

I

Յուլիս ամիսն էր. ճանապարհորդում էի արեւմտեան Ռուսաստանում, որտեղից ապա մտադիր էի անցնել Գերմանիա և հանդիպել միջին ու հարավային Եւրոպայի մի քանի քաղաքները:

Կիւից դէպի Վարշաւ տանող ճանապարհի վրայ, կայարաններից մէկում, իմ նստած կուպէ՛ն մտան երկու երիտասարդներ, որոնք իսկույն էլ ծանօթացան հետս՝ շնորհիւ այն փոքրիկ ծառայութեան, որ ես արի նրանց՝ զետեղելով իրենց կապոցները իմ իրեղէնների կողքին:

Երիտասարդներից մէկը, ինչպէս լեռոյ իմացայ, ռուս էր, միւսը լեհացի. երկուսն էլ շիկահեր, գրաւչադէմ և, ըստ երեւութին, զարգացած մարդիկ: Ռուսը, սակայն, բարձրահասակ, ամրակազմ և զուարթերես մէկն էր, խօսում էր այնպիսի ձայնով, որ, ասես թէ, հնչում էր ո՛չ թէ մէկ, այլ մի քանի մարդկանց բերանից: Մինչդեռ լեհացին նրբակազմ էր, գէմքի խաղաղ արտայայտութեամբ և խօսում էր մեղմ ու հանգիստ եղանակով:

Երբ սովորական հարց ու պատասխաններից պարզուեցաւ որ երեքս էլ գնում ենք Վարշաւ, ուրեմն և երկար պիտի ուղեկցենք իրար, լեհացին դառնալով ընկերին՝ ասաց.

—Այժմ կարող ես պատմութիւնդ շարունակել, մեզ ոչինչ այլ ևս չէ խանգարելու:

—Իսկապէս, շարունակելու շատ բան չէ մնում, պէտք է միայն ավարտել, նկատեց ռուսը:

—Ուրեմն աւարտել, յարեց լեհացին։

—Ամենայն սիրով, համաձայնուեց ընկերը և դառնալով ինձ՝ ասաց.—Սա մի պատմութիւն է, որ ես ըսկըսել էի դեռ կայարանում, գնացքն այդտեղ հասնելուց առաջ։

—Հաճութեամբ կը լսեմ և՛ ես, եթէ թոյլ կը տաք, յարեցի ես։

—Օհ, ես այնպէս բարձր եմ խօսում, որ ինձ ամենքը կը լսեն, նոյն իսկ, եթէ թոյլ չը տամ, ասաց ռուսը ծիծաղելով—բայց խնդիրն այն է՝ որ դուք շարունակութիւնից քիչ բան պիտի հասկանաք։

—Ինձ բաւական է, նոյն իսկ, վերջաբանը, ասացի կատակով։

—Ուրեմն յաւ գուշակող էք, հարցրեց խօսակիցս։

—Նայելով թէ՛ ինչի մասին է պատմութիւնը։

—Ինչի մասին կարող է լինել երիտասարդների պատմութիւնը, ի հարկէ, սիրոյ։

—Եհ, սէրը միայն մի պատմութիւն ունի, նկատեցի ես։

—Ինչպէս. ուրեմն ես կարող եմ, նոյն իսկ, չը պատմել, եթէ դուք արդէն լսել էք այդպիսի մի պատմութիւն։

—Ընդհակառակը, դուք կանգ էք առել հենց վերջի վրայ. իսկ սիրոյ պատմութիւնները, որքան էլ իրար նման, այսուամենայնիւ, ունենում են հետաքրքրական վերջաբաններ։

—Բայց, երեւակայեցէք, որ իմը չունեցաւ այդպիսին։

—Այսուամենայնիւ, մի վախճան հո ունեցաւ, հարցրեց լեհացին։

—Այո, վախճանը եղաւ այն, յարեց ռուսը, որ ծնողները մերժեցին ինձ։

—Մերժեցին։

—Բացէ ի բաց։

—Պատճառը։

—Շատ պարզ էր. իրենք հարուստ էին և ազնուատոհմ, իսկ ես՝ աղքատ և ապատոհմիկ։ Նրանց աչքում, ի հարկէ, նշանակութիւն չունէր այն՝ որ ես գարգա-

ցած ու բարեկիրթ մարդ էի և ապրում էի իմ արդար վաստակով. բայց նշանակութիւն ունէր այն՝ որ ես ծառայող էի: Ե՛հ, ինչպէս կարող էին Միրովիչները պէս մարդիկ կապել իրենց աղջկայ բաղտը մի աննշան աշխատաւոր Սաբօրինի հետ...: Այսպէս մտածեցին նրանք և խնդիրս մերժեցին:

— Յետոյ ի՞նչ եղաւ:

— Յետոյ եղաւ այն, ինչ որ չէին կարող սպասել: Օրիորդը բացարձակապէս յայտարարեց ծնողներին թէ՝ «որովհետեւ դուք մերժեցիք իմ ձեռը այն երիտասարդին, որին ես սիրում էի, ուստի ես էլ այսուհետեւ կը մերժեմ բոլոր նրանց, որոնց դուք ինձ համար կառաջարկէք փեսացու և կը դատապարտեմ ինձ մշտական կուսութեան»:

— Յետոյ:

— Յետոյ, էլ ոչինչ. օրիորդը հաստատ մնաց իւր որոշմանը: Նոյն իսկ այն օրերը, երբ ես գտնւում էի Վարշաւ, նա մերժեց առաջարկութիւնը երկու այնպիսի անձանց, որոնք յայտնի էին քաղաքում թէ՛ իրենց դիրքով և թէ՛ հարստութեամբ: Երբ նա այդ մասին զեկուցեց ինձ նամակով, ես ապշեցայ: Ոչ մի օրիորդ քաջութիւն չէր ունենալ նման առաջարկութիւններ մերժելու: Այնուհետեւ ես հեռացայ Վարշաւից՝ ուխտելով՝ հետեւել իմ սիրեցեալի օրինակին:

— Մնալ միշտ ամուրի:

— Այո՛... և հոգւով միացած իմ Մարիի հետ:

— Այդ մէկն իզուր է. քեզ խորհուրդ եմ տալիս, որ հենց այսօրուանից, երբ մենք կը մտնենք Վարշաւ, ընտրես քեզ համար մի նոր հարսնացու, ասաց լեհացին ժպտալով:

— Երբէք, իմ ուխտը հաստատ է այնպէս, ինչպէս և իմ սիրեցեալինը, բացականչեց Սաբօրինը, ինքն իւր խօսքից ոգւորուելով:

— Քոնը, գուցէ, հաստատ է, բայց սիրեցեալդ կը դժժէ իւր ուխտին:

— Անկարելի է: Նրա վերջին նամակը այլ ևս կասկածելու տեղ չէ թողում: Նա ինձ գրում է թէ՝ որոշել է՝ ծնողների թանխանձանքից ընդ միշտ ազատուելու

Համար մտնել գթութեան քուրերի «Սուրբ Երրորդութեան» միաբանական կարգը:

— Նա այդ չի անիլ:

— Կանէ. նա կամքի տէր աղջիկ է, պնդեց երիտասարդը ջերմութեամբ:

— Հաւատացէք, աշխարհում չը կալ կամքի տէր աղջիկ և չի կարող լինել. որովհետեւ աղջկալ կամքը գտնուում է միշտ այն տղամարդի ձեռքին, որին նա սիրում է: Իսկ եթէ բարեբաղդաբար, կամ զժբաղդաբար, չէ սիրում ոչ ոքի, ապա նա նմանում է անղեկավար մի նաւի. որին քամին տանում է, ուր որ կամենում է: Այդ դէպքում, առաջին պատահած ձեռքը, եթէ միայն ոյժ ունի, կը քաշէ նրան իւր ետեւից և սա երբէք չի մտածիլ՝ դէպի խորն է գնում, թէ՛ դէպի ժայռերը:

— Այդպիսի կարծիքներ, որքան կամենաք, կարող էք այժմ կարդալ կանանց ազատագրութեան դէմ խօսող գրքերում: Բայց ես համոզուած եմ որ նոյն իսկ դրանց հեղինակները չեն ճանաչել կանանց այնպէս, ինչպէս որ պէտք է և շատ բան գրել են աւելի կրքից դրդուած, քան թէ ճշմարտութիւն ասելու մտքով:

— Իզուր ես կարծում թէ քեզ հետ խօսողը մի հնավաճառ է, նկատեց լեհացին, այս անգամ արդէն իւր ձայնին տալով մի զօրաւոր շեշտ. իմ կարծիքները ես քաղում եմ ոչ թէ գրքերից այլ իմ փորձերից:

— Զարմանում եմ, Շան, որ դու քեզ աւելի փորձառու ես համարում, դարձաւ Սաբօրինն ընկերոջը— ինստիտուտից արդէն լիշում եմ, որ դու այն ժամանակ փոքր էիր ինձանից երկու տարով:

Իմ ուղեկիցներն, ուրեմն, ուսանողական ընկերներ էին և այդ էր, անշուշտ, պատճառը որ մի ռուս ու լեհացի բարեկամաբար էին վերաբերւում իրար, որ հազուադէպ երևոյթ էր:

— Եթէ այն ժամանակ փոքր էի երկու տարով, հաւանական է որ այժմ էլ փոքր լինեմ նոյն չափ, կատակեց լեհացին— բայց խնդիրն այդ չէ. ինստիտուտից ելնելուց լետոյ անցել են վեց երկար տարիներ, որից լետոյ մենք այլ ևս չենք տեսել իրար: Միթէ այդքան

ժամանակում չէին կարող իմ գլխով անցնել այնպիսի բաներ, որոնք այս կամ այն խնդրի նկատմամբ դարձնէին ինձ փորձառու:

— Ինչո՞ւ չէ, կարող էին:

— Այդ կետում, ուրեմն, չես վիճում ինձ հետ: Բայց որպէս զի դու համոզուես թէ, արդարեւ, իմ կարծիքները հիմնուած են սեփական փորձերի վրայ, թող տուր որ պատմեմ հենց դրա նման մի ուխտի համառօտ պատմութիւնը, որ գուցէ օգնէ քեզ՝ կասկածել մի փոքր, նա և, քեզ սիրող ազգայ կամքի և նրա արած ուխտի հաստատութեան վրայ:

— Պատմիր, լսում եմ:

— Իսկ դուք ընդդէմ ոչինչ չունիք, հարցրեց ինձ Եանը:

— Ընդհակառակը, ես ևս կը լսեմ սիրով:

— Ուրեմն լսեցէք:

II.

«Երկու տարի առաջ, սկսաւ լեհացին իւր պատմութիւնը, մասնաւոր լաբօրատօրիաներից մինում, ուր ես լաբօրանտի պաշտօն էի կատարում, նիտրօ-գլիցերինով արած մի փորձի ժամանակ տեղի ունեցաւ մի անսպաս պայթիւն: Որովհետեւ փորձը ես էի կառավարում, ուստի պայթիւնից առաջացած վնասն էլ հանդիպեց ինձ: Փշրուած անօթի մասերը այնպէս էին հարուածել աջ թևս, որ ես իսկոյն էլ ուշաթափ էլ եղել: Առաջին անգամ որ աչքս բացի, տեսայ ինձ հիւանդանոցում, շրջապատուած սպիտակազգեստ բժիշկներով: Դրանցից միւնը բռնած էր թևս, միւսը հաւաքում ու կապկպում էր մսանները, որոնք մի քանի տեղերից պատառոտուած կախուած էին: Թևիս այդ վիրալից տեսքը բաւական եղաւ որ ես նորից ուշաթափուիմ, կամ, գուցէ, այդ պատահեց շատ արիւն կորցնելուց: Կան մարդիկ, որոնք ամուր սիրտ ունին և կարող են անվրդով դիտել ոչ միայն ուրիշների այլ և իրենց անձի վրայ կատարուած անդամատութիւնը: Իսկ ես, ընդհակառակը, ոչ միայն ինձ, այլ և ուրիշներին պատահած այդպիսի դժբաղդութեան անկարող եմ նայել:

Երբ երկրորդ պնդամ աչքերս բացի, կուռս արդէն փաթաթած, կապած էին: Ի՞նչ էին արել նրան, չը գիտեմ. միայն թէ զգում էի խիստ ցաւի մի մրմունջ, որ յաճախ նետի պէս կռանս ոսկորից անցնելով՝ խփում էր սրտիս և ամբողջ էութիւնս ցնցում: Ներկայ եղող բժիշկներից մինը, երևի ինձ սիրտ տալու համար՝ յայտնում էր իւր զարմանքը որ այդպիսի «չնչին» վնասուածքի պատճառով այդպէս տագնապում էի: Իսկ միւսը յուսադուր էր թէ՛ շուտով պիտի հանգստանամ, ըստ որում գործ դրած կօկալիտը թոյլ չի տալ որ ցաւերը երկար շարունակուին: Բայց դրանցից աւելի իմ ցաւերը մեղմելուն օգնում էր մի ձեռք, որ իմ սնարի կողմից մերթ ընդ մերթ մօտեցնում էր քթիս մի ինչ որ էֆիլի սրուակ, որից փչող սուր հոտից առ վայրկեան հանգստանում էին սրտիս խփող ցաւերը: Այդպիսի վայրկեաններից մինում ես նկատեցի որ այդ ձեռքը քնքոյշ էր ու սպիտակ, ինչպէս մարմարին. նա ունէր փոքրիկ դաստակ, երկար, բիւրեղեայ մատներով: Սրուակն այդ սիրուն ձեռքում, կարծես, հետզհետէ աւելի էր ոյժ ստանում և աւելի արագ ներգործում իմ նեարդերի վրայ, անզգայ դարձնելով նրանց դէպի ցաւերը: Երբ բժիշկները սենեակից ելան՝ յայտնելով որ երեկոյեան նորից կը գան ինձ տեսնելու, առաջ անցաւ սիրուն ձեռքի տէրը, որ գլխութեան քոյրերից մինն էր և աթոռակն առնելով՝ դիմացս նստեց:

— Այժմ լինչպէս էք զգում, ցաւերը չեն անցնում, հարցրեց նա քնքշութեամբ:

— Շնորհակալ եմ, կարծես, անցնում են, ասացի ես և սկսայ դիտել գլխութեան քրոյը, որ երիտասարդ մի աղջիկ էր, նրբակազմ և գեղեցիկ: Նա հազած էր սև շրջազգեստ՝ սպիտակ գոգնոցով, որի կրծկալը ունէր կարմիր խաչանիշ: Իսկ գլուխը կիսով չափ ծածկած էր կտաւի ձիւնափայլ գլխանոցով, որի մէջ նրա դէմքը՝ իւր ծաւի աչերով, երկար արտեանունքներով, փոքր ու ողորկ թթով և ժպտուն բերանի կարմրալար շուրթերով՝ չքնաղ լինելուց զատ, ունէր մի ինչ որ գերբնական գրաւչութիւն, որը չէր կարելի անուանել ուրիշ

բան, բայց եթէ սիրոյ ու գթութեան արտայայտութիւն:

Միջանկեալ պիտի ասեմ որ ես, առհասարակ, գեղեցկութեան սիրահար եմ: Մեռնելուս ժամին իսկ՝ եթէ երկու սիրուն աչեր իրենց ժպտուն հայեացքը յառեն ինձ վրայ, կարող եմ հոգեդարձ լինել... ինչ էլ որ չը խօսեն մարդիկ կանանց ներքին արժանաւորութիւնների մասին, որքան էլ վերջինս չը գերադասեն կնոջ արտաքինին, այսու ամենայնիւ, ես միշտ պիտի մնամ այն կարծիքին թէ՛ կինը զօրաւոր է միայն այն ժամանակ, երբ ներքին արժանեաց հաւասար՝ ունի և արտաքին գեղեցկութիւն: Դրէք Քանտի խելքն ու Գէթէի հանճարը մի տգեղ ու զառամ կնոջ մէջ և պահանջեցէք որ ես կենակցեմ նրան՝ իբրև ներքին արժանաւորութիւններով օժտուած կնոջ...: Խոստովանում եմ, սիրով կը զրկուիմ թէ Քանտի խելքի և թէ Գէթէի հանճարի ինձ տալիք բարիքներից, միայն թէ ամեն օր իմ աչքի առաջ չունենամ իմաստուն տգեղութիւնը: Եւ դուք մի կարծէք թէ՛ թեթև բնավորութիւնն ու բարւոք խորհելու պակասութիւնն է որ գերի է դարձնում մեզ ճշմարիտ գեղեցկութեան, ոչ. դա ինքը բնութիւնն է, որ գործում է մեր մէջ իւր անշեղ օրէնքներով, հարկադրելով մեզ՝ ընտրել միշտ լաւագոյնը՝ նման արտադրելու համար: Եւ ընտրութեան այդ ձգտումը չէ նայում ոչ տեղի, ոչ ժամանակի վրայ. նոյն իսկ մեր մարմնի տկարութիւնը յաճախ տեղի է տալիս այդ թագուն ձգտման, մոռացնելով մեզ իւր գոյութիւնը: Եւ իրաւ, միթէ կարելի էր երևակայել թէ՛ այնպիսի մի ճգնաժամում, որի մէջ գտնուում էի ես, կարող է մարդ իւր ցաւը բոլորովին մոռանալ՝ լոկ մանկամարդ մի կնոջ գեղեցկութիւնից գրաւուելով, Հարկաւ, ոչ: Բայց ես մոռացել էի: Մի ժամանակ տեսայ որ ոչինչ այլ ևս չէ ցաւում վրաս: Գթութեան քրոջ այն հարցին թէ՛—ինչին առաջացաւ պայթիւնը, ես սկսել էի պատասխանել աւելի քան մանրամասնօրէն՝ ծանօթացնելով նրան ոչ միայն պայթիւնի հանգամանքներին, այլ և բացատրելով նիտրօգլիցերինի էութիւնը և նրա ահաւոր զօրութեան գաղտնիքը: Մի

փոքր ևս, և ես, գուցէ, սկսեի պատմել թէ՛ ինչպէս է գտել նրան Սօբերրօ քիմիկոսը և թէ ինչպէս նրանից Ալֆրէտ Նօբելը շինել է դինամիտ և այլն: Բայց, գեղեցիկ քրոջը կանչեցին այդ միջոցին և նա սիրածը պիտ ևառ այժմ ցտեսութիւնս ասելով հեռացաւ:

Երբ ես մնացի միայնակ, զգացի որ թեւս դարձեալ ցաւում է, թէպէտ ոչ առաջուայ նման սաստիկ: Իսկ օրուայ ընթացքում գթութեան քօլըր դարձեալ մի երկու անգամ մտաւ սենեակս և միշտ էլ քաղցրաժպիտ առողջութիւնս հարցրեց և դուրս գնաց:

Երեկոյեան դէմ՝ ներս եկան բժիշկները և ասացին ինձ հետեւեալը.

— Որովհետեւ դուք այժմ այնքան հանգիստ էք որ կարող էք լսել մեր զեկուցումը, ուստի յայտնում ենք ձեզ որ ձեր թեւը ողջացնելու համար միայն երկու միջոց կայ. — առաջինն ու դիւրինը, որի հետ չեն կապուած մեծ նեղութիւններ և որը, ոչ միայն երկար չի տանջիլ ձեզ, այլ և ապագայի համար վտանգաւոր հետեւանք չի ունենալ, այն է որ ձեր թեւը կիսով չափ կտրենք: Իսկ երկրորդն ու դժուարինը այն՝ որ այդ թեւը պահելու նպատակով՝ երկար օրերի, գուցէ և ամիսների ընթացքում պատճառենք ձեզ ծանր և անտանելի տանջանքներ, որոնք պիտի առաջանան լաճախ ձեր վէրքերը բանալուց, լուանալուց, պատռուածքները կարելուց և երբեմն նրանց նորից քակելուց, գեղեր դնելուց և այլն և այլն:

— Օ՛, անկարելի է. ես չեմ թողնիլ որ թեւս կրտրէք, բացառանչեցի ես. պատրաստ եմ, թէկուզ, ամբողջ տարի տանջուել, միայն թէ իմ կեանքում չը մնամ ես կռնատ:

— Եթէ այդպէս է, ամբարջէք, ուրեմն, ձեր սիրտը մի շարք տանջանքներ կրելու համար, խօսեց գըլխաւոր բժիշկը, բայց կրկնում եմ, դրանք դժուարատար կը լինին:

— Հօգ չէ, թող լինին. գոնէ ձեռքից չեմ զրկուել, ասացի ես: Բայց, միևնոյն ժամանակ, երկիւղ կրելով բժշկապետի խօսքերից, հարցրի թէ՛ արդեօք չե՞ն կա-

ըող իմ վերքերը քրքրելուց առաջ՝ քնացնել ինձ բլրորուկով:

— Սյգպէս էլ կանէինք՝ միանուագ անգամատելիս, պատասխանեց բժիշկը, բայց յաճախ կրկնուող դարմանադրութեան ժամանակ, այդ անկարելի է. նախ այն պատճառով, որ իւրաքանչիւր քնացման հետ կապուած են որոշ դժուարութիւններ և երկրորդ որ դուք, ինչպէս այսօր տեսալ, սրտի թուլութիւն ունիք և չէք կարող յաճախակի քնացման ենթարկուիլ, առանց վտանգելու ձեր առողջութիւնը:

— Ուրեմն սկսեցէք, կաշխատեմ համբերել. սստացի ես:

— Եթէ հաստատապէս որոշէք, կարող էք համբերել:

— Ի հարկէ, կարող է, տղամարդ չէ. յարեց միւս բժիշկը:

— Իսկ ես կարծում եմ որ պարոնն այդ դէպքում ոչ միայն համբերութիւն այլ և օրինակելի արիւթիւն ցոյց կը տալ, խօսեց գթութեան քօյրը՝ գեղանի աչերն ինձ վրայ յառելով:

— Կաշխատեմ... սսացի ես և նրա քնքոյշ հայեացքն ու ժպիտը, կարծես, ոյժ տուին ինձ ամեն տեսակ տանջանք անտրտունջ կրելու:

Առաջին անգամից իսկ, երբ իմ թեւը բացին և սկսեցին նրա վերքերը լուալ, ես զգացի, արդարեւ, սթստիկ սուր ցաւեր: Դրանք անտանելի դարձան, մանաւանդ, երբ փորձեցին մի երկու տեղ պատառուածքը կտրել: Եւ, սակայն, զարմանալի է, այդ ցաւերը չէին թափանցում սիրտս այնպէս շեշտակի, ինչպէս այդ լինում էր առաւօտը, երբ առաջին անգամ էին թեւս կապկպում: Ես մտածում էի թէ՛ գուցէ սիրտս ամրացել է մի քանի ժամուայ ընթացքում: Բայց շուտով պարզուեց որ այդ չէ պատճառը. այլ այն՝ որ գթութեան մանկամարդ քօյրը իւր սիրուն աչերն ինձ վրայ սեւեռած՝ ամեն անգամ, երբ ես ցնցւում էի ցաւից, կամ դէմքիս տանջանքի նշան արտայայտում, ինքն էլ ինձ հետ, կարծես, տանջւում էր իւր ներսում, մերթ առօր ժպիտը դէմքից վանելով, մերթ նրան կսկիծի:

ստուեր խառնելով... Ահա, հենց այդ պատճառով ես աշխատում էի արիանալ և չգալ այն ցաւերը, որոնք պատճառում էին ինձ բժշկի մատներն իւրաքանչիւր շարժումը. սպունգի լուացումը, դարմանի հպումը, որպէս զի գթութեան մանկամարդ քօրն ես չը տանջուէր ինձ հետ:

Թէ այդ միտքն էր, իսկապէս, իմ ցաւերի դէմ ինձ արիացնողը, այդ բանին ես համոզուեցայ, երբ գթութեան քօյրը, մի ինչ որ դեղ բերելու համար, հեռացաւ մեզնից մի քանի վայրկեան: Իմ ցաւերն, այդ ժամանակ, կարծես, սաստկացան. մինչդեռ երբ նա դարձաւ, նորից սկսան հանգստանալ: Եւ սակայն դա իսկապէս, հանգստութիւն չէր, այլ համբերելու համար գործ դրուած ոյժի մի տեսակ լարումն, որ դիւրացնում էր տոկալը և, հետեապէս, թեթեացնում ցաւը:

Բժշկապետն իւր գործը աւարտելու լետոյ, գովեց իմ արիութիւնը և ասաց որ ինձանից նա չէր սպասում այդքան համբերութիւն:

— Եթէ այսպէս շարունակուի մեր գործը, աւելացրեց նա ժպտելով, լուսով եմ որ շատ շուտով կը վերադարձնենք ձեզ ձեր գործարանը՝ նորից փորձեր անելու:

Հետեւեալ լուացումն ու դարմանագրութիւնը նոյն ձևով անցաւ, ինչպէս և առաջինը: Գթութեան քօյրը դարձեալ դիմացս էր, ուստի տանջանքի զգացում չը ցուցի, չը նայելով որ այս անգամ դարձեալ մի կարուածք անելու փորձն ևս աւելացել էր:

Բայց երրորդ անգամին այնպիսի կսկիծ ու տանջանքներ կրեցի, որ սիրտս ուղղակի թուլանում էր ցաւից և ես չէի կարողանում զսպել ինձ՝ որ չը ճչամ, կամ բարձրաձայն չը հառաչեմ:

Բժիշկը զարմանում էր:

— Անցեալ օրն ու երէկ աւելի պիտի ցաւ զգայիր և սակայն դու քաջութեամբ համբերեցիր: Այժմ ինչ է պատահել որ հոմեոպատաբար աւելի թեթեւ ցաւերին չես դիմանում, հարցրեց նա ինձ:

— Չը գիտեմ, այսօր աւելի եմ ցաւ զգում, ասացի ես:

—Այդպէս չը պէտք է լինի... նկատեց բժիշկը և նայեց վրաս տարակուսական հայեացքով:

— Գուցէ այն է պատճառը որ երէկ և անցեալ օր ներկայ էր այստեղ ձեր քօյրերից մինը...

—Հա, լետո՞ւ... ընդհատեց ինձ բժիշկը ժպտալով ու յօնքերը վեր բարձրացնելով:

—Ես նրա դէմքի վրայ նշմարում էի կարեկից զգացմունք դէպի իմ տանջանքը, ուստի ես էլ իմ կողմից աշխատում էի զսպել ինձ...

—Որպէս զի նա չը վշտանայ:

—Այո:

—Հա, հասկանում եմ... բացականչեց բժիշկը ուրախ ծիծաղելով. ուրեմն սիրուն կնոջ երկու աչերն էլ նոյնպիսի դեր են խաղում ցաւեր թմրացնելու նկատմամբ, ինչպէս որ կոկայինն ու քլորոկը... նշանակի՞ր այս բանը քո յուշատետրում, collega, դարձաւ նա ընկեր բժշկին— այս առթիւ անպատճառ հարց պիտի զարթեցնեմ բժշկական ժողովում:

Մենք ծիծաղեցինք: Իսկ այդ վայրկենին ներս մտաւ գթութեան քօյրը:

—Սոփիա Իւանովնա, յատկապէս խնդրում եմ որ ամեն օր ներկայ լինիք մեր այս հիւանդի դարմանադրութեան, դարձաւ բժիշկը երիտասարդուհուն այնպիսի մի լրջութեամբ, որ անկարելի էր նրա խօսքի ետեւում թաքնուած ծիծաղը նշմարել:

—Ամենայն սիրով. բայց ես զբաղուած էի. բժիշկ Գրօտն այսօր չորրորդ պալատում...:

—Ախ, դուք կամենում էք արդարանալ, ընդհատեց բժիշկը, տեսնելով որ աղջիկը սխալ է հասկացել իրեն— չէ, մենք չենք մեղադրում ձեզ որ այսօր չէք եկել, այլ խնդրում ենք որ այսուհետև ներկայ լինիք. . . ինչպէս երևում է, մեր այս հիւանդը արիանում է ցաւերի դէմ՝ երբ տեսնում է իւր առաջ մի քնքոյշ էակ, որ կարեկցում է իրեն... անշուշտ ումանտիկ է և ընտիր ասպետ... այս ասելով բժիշկը նորէն ծիծաղեց, իսկ գթութեան քրոջ այտերը թեթեւակի շիկնեցին:

Երբ բժիշկներն հեռացան, Սոփիա Իւանովնան

զբաղուեց զեղերի ու վերակապի մնացորդը հաւաքելով և ընդնմին հարցրեց ինձ ժպտալով.

— Այդ դժւբ ցանկացաք որ ես ներկայ լինիմ ձեր դարմանադրութեան:

— Այո, ասացի ես և բացատրեցի պատճառը:

— Բարի և անկեղծ սիրտ ունիք, արժէ խնամել նրան... ասաց գթութեան քոյրը մի առանձին քնքշութեամբ և պալա հաւաքած իրերը աղախնին յանձնելուց յետո՛ւ աւելացրեց, — Թէպէտ լաւ չէ շարունակ ցաւի զգացումը զսպել, այսուամենայնիւ, դա անհրաժեշտ է վերակապի ժամանակ, որպէս զի բժիշկը կարողանայ անվրդով իւր գործը տեսնել... այդ պատճառով ես կաշխատեմ ներկայ լինել միշտ:

— Բայց դուք մի կարծէք թէ ես ոյժ եմ գործ դնում ինձ զսպելու համար, ո՛չ, այլ ես, ուղղակի, քիչ եմ ցաւ զգում, երբ դուք ինձ վրայ նայում էք կարեկցութեամբ, ասացի ես ծիծաղելով:

— Այդ հօ աւելի լաւ, յարեց Սոփիա Իւանովնան և ինքն էլ ծիծաղեց: Բայց, միևնոյն ժամանակ, զգալով որ երկուսս էլ շատ առաջ գնացինք մեր բացատրութիւններով, «առ այժմ ցտեսութիւն» ասաց ու դուրս գնաց:

Այնուհետեւ օրերով շարունակում էր իմ թւի դանդաղ դարմանումը, որին, գրեթէ միշտ, ներկայ էր լինում, նաև, գթութեան քոյրը: Տեսնելով իմ կրած, արգարև, ծանրատար և, իւր տեսակում, կարի չարատանջ ցաւերն ու կսկիծը, որոնց ես, սակայն, ի սէր իւր չքնաղ ծաւի աչերի տանում էի համբերութեամբ, գթութեան քոյրը, կարծես, հետզհետէ աւելի էր կապւում ինձ հետ հոգւով և նայում վրաս ոչ իբրև մի օտար հիւանդի, այլ իբրև ազգակցի ու հարազատի վրայ: Այս իսկ պատճառով նա յաճախ գտնում էր, նաև, ազատ ժամեր, մօտս նստելու և մտերմօրէն խօսակցելու համար:

Այդպիսի մի օր, հարցրի նրան ուղղակի թէ՛ ինչ է պատճառը որ իւր նման մի սիրուն, դեռ կեանքով ու կրակով լի երիտասարդուհին, որ կարող էր թէ իրեն և թէ իւր նման մի ուրիշ երիտասարդի բաղդ ու

երջանկութիւն բերել, փակուել է հիւանդանոցի տխուր պատերում և նուիրել իրեն այնպիսի մի պաշտօնի, որ-
պիսին զթուլթեան քող պաշտօնն է:

— Ի՞նչ է, միթէ ես դրանով փոքր ծառայութիւն եմ անում մարդկանց, նկատեց նա ժպտալով:

— Ոչ թէ փոքր, այլ ընդհակառակը, մեծ ծառայութիւն էք անում. բայց բանն այն է որ դուք այդ ծառայութիւնն ուրիշներին անելով, ինքներդ զրկուում էք շատ բարիքներից: Դա մի առաքինութիւն է, որ շատ քչերին կարող է սիրելի լինել: Հենց այդ պատճառով էլ ես հետաքրքրում եմ իմանալ թէ՛ ի՞նչ շարժառիթներ են սիրելի դարձրել ձեզ այդ առաքինութիւնը:

Դթութեան քոյրը, որ գեղեցիկ լինելու չափ, նաև, պարզասիրտ էր, ուղղակի պատասխանեց.

— Ձեմ լիշում թէ առաջ մտածած լինիմ մարդկանց որևէ բարիք անելու, թէպէտ չարութեան ի՞նչ լինելն էլ չեմ իմացել: Դեռ տղայ հասակից՝ ես աւելի ետասէր՝ քան ընկերասէր էի: Այդ առթիւ յաճախ դիտողութիւն էին անում ինձ շրջապատողներս. բայց իմ հոգը չէր, ես սիրում էի միայն նրանց, որոնք գգւում էին ինձ, առանց իմ թերութեան ուշադիր լինելու: Բայց ահա պատահեց մէկը (այդ ժամանակ ես դեռ 15 տարեկան էի), որ ծանօթացաւ ինձ՝ հենց իմ եսասիրութիւնը ծաղրելու շնորհիւ և, սակայն, ես սիրեցի նրան: Դա գեղակազմ մի կադետ էր, սիրուն դէմքով, հրապուրիչ աչքերով և վայելուչ շարժումաճքով: Յաճախակի տեսակցութիւնները օգնեցին մեզ՝ աւելի մօտից իրար ճանաչելու: Այդ ծանօթութիւնը ծնեցրեց մեր մէջ մի քնքոյլ մտերմութիւն, որն ապա շուտով փոխուեցաւ բուռն սիրոյ: Դժբաղտաբար կադետը, որ աւարտել էր կորպուսը, պիտի գնար Պետերբուրգ, գինուորական բարձրագոյն դպրոց մտնելու: Մենք ստիպուած էինք բաժանուել: Այդ անջատումը թէպէտ ծանր էր, բայց նա մեր սէրը չը սառեցրեց, ընդհակառակը, աւելի ևս բորբոքեց: Հինգ երկար տարիների ընթացքում մենք տեսնում էինք իրար հետ միայն արձակուրդի ամիսներում, երբ երիտասարդը վերադառնում էր հայրենիք:

Այդ ամիսները մենք անցնում էինք ամարանոցում՝ մեր ծնողների հետ, որոնք մեր սիրով վրայ նալում էին իբրև մեր ապագայ միութեան գրաւականի վրայ: Հարկ չը կայ ասել որ այդ ամիսները բերում էին մեզ անհուն երջանկութիւն: Իսկ երբ երիտասարդը հեռանում էր, մենք մեր սիրով զեղումը յանձնում էինք նամակներին, որոնց թիւը մեծ էր լինում և որոնցից իւրաքանչիւրը յաճախ բաղկացած էր մի քանի թերթերից... Ի՞նչ էինք գրում մենք իրար, որանշից էինք գտնում խօսելու այդքան նիւթ, չեմ լիշում, միայն գիտեմ որ այդ նամակները մեզանից խլում էին անթիւ ժամեր և աւելի ևս օգնում մեր սէրը բորբոքելուն:

«Վերջապէս երիտասարդն աւարտեց և վերադարձաւ օֆիցերի աստիճանով: Եւ որովհետեւ նա հարուստ էր, ուստի խօսք չեղաւ այն մասին թէ՛ զինուորական վարչութիւնը կարող է արդեօք արգելք լինել նրա վաղ ամուսնանալուն: Մենք նշանուեցանք պաշտօնապէս: Ծնողներս պատրաստում էին իմ օֆիսը: Մի ամսից յետոյ պիտի պսակուէինք. այդ ամենքը գիտէին. նոյն իսկ իմ ընկերուհիները նոր հագուստներ էին կարում իմ պսակադրութեան ներկայ լինելու համար... Եւ սակայն հենց այստեղ արդարացաւ առածը՝ «Խորհուրդք մարդկան՝ կամք Աստուծոյ»—Այդ օրերում իմ փեսան՝ պաշտօնակից օֆիցերների կողմից՝ հրաւիրուեցաւ մասնակցելու ընկերական մի որսի, որ տեղի պիտի ունենար մօտիկ կալուածներից մինում: Եւ, ահա, այդ տեղ որսի ժամանակ, նամի դժբաղդ դիպուածով՝ գնդակահար եղաւ իւր մի ընկերից, որը կատաղի կինճից հալածուելիս՝ երբ դարձել, արձակել էր հրացանը, գնտակը փոխանակ գազանին դիպչելու, վրիպել, զարկել էր իմ խեղճ փեսացուին, որ այդ ժամանակ գտնուում է եղել թաւուտում...: Այս դժբաղդութեան լուրը կայծակնահար արաւ ինձ: Կորուստը ծանր էր և անդարմանելի. քիչ էր մնում որ վշտիցս խելագարուէի... բայց ծնողներս հետս էին, նրանք հսկեցին վրաս երկար ժամանակ և ամեն միջոց գործ դրին հարուածի սաստկութիւնը մեղմելու համար: Այսուամենայնիւ կեանքը կորցրեց ինձ համար իւր արժէքը: Ի՞նչ էր նա այ-

նուհետև առանց իմ սիրելուն—ի հարկէ, ոչինչ: Այս պատճառաւ սգոյ ծանր օրերն անցնելուց յետոյ՝ ես որոշեցի հեռանալ աշխարհից ընդ միշտ: Բայց կուսանոց մտնել չէի կարող. իրնէ ատուած էի անգործութեան դատապարտուած այդ միջավայրերը: Որոշեցի դառնալ զթուլթեան քոյր, մտնել հիւանդանոց և օգնել այստեղ դժբաղդներին. այդ ժամանակ արդէն գիտէի թէ՛ ինչ է նշանակում դժբաղդ լինել...: Այս նպատակով ահա հեռացայ իմ հայրենի քաղաքից և եկայ այստեղ: Ծնողներս չընդգիմացան, համոզուած լինելով որ այս միջոցը կարող է մեղմել իմ ցաւը, կամ ժամանակով մոռացնել նրան: Եւ, սակայն, ահա լրանում է երկու տարին, ինչ ես գտնուում եմ այստեղ, այսուամենայնիւ, իմ ցաւը դեռ էլի այնպէս թարմ է, ինչպէս որ սրանից երկու տարի առաջ...»:

Այս ասելով երիտասարդուհին խոր լոգոց հանեց: Ես, ի հարկէ, իսկոյն, սկսայ մխիթարել նրան ամենաքնքոյշ խօսքերով, այլ և գովել իւր իմաստուն որոշումը, որով ցանկացել էր մեղմել սրտի ցաւը՝ ուրիշներին բարեք անելու խելացի ճանապարհով: Վերջը յարեցի թէ՛ վշտերը, որքան էլ ծանր լինին ու ճնշող, այսուամենայնիւ, նրանք պիտի մոռացուին մի օր և այն ժամանակ կեանքը, դարձեալ կը քաղցրանայ իւր աչքում և այլն և այլն:

Խօսքերս, ըստ երևութին, հաճելի տպաւորութիւն արին օրիորդի վրայ. նրա տխրութիւնն անցաւ, իսկ մի քիչ յետոյ նա, մինչև անգամ, ժպտաց և գոհութեամբ լի աչքերը վրաս սևեռելով՝ ասաց.

—Արդարև, կեանքը այնքան էլ դառն չէ, պէտք է միայն աշխատել չը դառնացնել նրան:

—Հարկաւ, լացողին արցունք չի պակսիլ, ոչ էլ ուրախացողին՝ ծիծաղ... մոռացումը ամենալաւ սպեղանին է ամեն տեսակ վշտերի դէմ, ասացի ես:

—Ես էլ, ահա, աշխատում եմ մոռանալ իմ վիշտը այս զբաղմունքով, տեսնենք, կը յաջողի՞ թէ ոչ:

—Անշուշտ կը յաջողի, պէտք է միայն արիութեամբ աշխատել:

Օրիորդը չը պատասխանեց, բայց ժպտաց և ապա սիրալիր մի հայեացք ձգելով վրաս՝ հեռացաւ։

Մինչև այսօր էլ չը գիտեմ թէ՝ հոգեկան զգացմունքների ո՞ր գաղտնի օրէնքին պիտի վերագրէի այն՝ որ գթութեան քուրը իւր ուխտի պատմութիւնն ինձ անելուց լետոյ, փոխանակ ինձանից հեռու մնալու, իբրև իւր ուխտին հաւատարիմ մէկը, ընդհակառակը, հետզհետէ աւելի էր մօտենում ու մտերմանում և իւր ազատ ժամերը, գլխաւորապէս, նուիրում ինձ։ Իւր հաճոյական զրոյցների ժամանակ նա երբեմն երբեմն նալում էր վրաս այնպիսի մի հայեացքով, որ թափանցում էր մինչև իմ սրտի խորքը և վառում այնտեղ սիրոյ թէ տարփանքի մի անժոյժ կրակ, կարող՝ բոցավառելու իմ ամբողջ էութիւնը։ Այսպիսի վայրկեաններում ես ինքս երբեմն շրջում էի աչքերս, որպէս զի կուսի կրակոտ հայեացքը չը հանդիպէր նրանց և ասել, կամ գործել չը տար ինձ այնպիսի մի բան, որ վերաւորական լինէր գթութեան քրոջ համար։ Բացի այդ հայեացքները, նրա զրոյցներն էլ քիչ չէին գրգռում ինձ։ Մի անգամ, օրինակ, նա ասաց ինձ.

— Այստեղ ես շատ հիւանդներ եմ դարմանել, բայց ոչ ոքին այնպէս հաճութեամբ չեմ այցելել, ինչպէս ձեզ։ Առաջները, հենց որ գործս վերջացնում էի, կամ հերթապահութիւնս լրացնում, վազում էի սենեակս և սկսում այնտեղ կարգաւ։ Այժմ այլ ևս չեն գրաւում ինձ ոչ միայնութիւնը, ոչ էլ գրքերի ընթերցանութիւնը։ Գործս աւարտելուց լետոյ՝ գալիս եմ ձեզ մօտ։ Այստեղ, առհասարակ, շատ լաւ եմ զգում ինձ...

Մի ուրիշ օր ասաց.

— Խնդրում եմ այսուհետև չանուանէք ինձ՝ Սոփիա Իւանովնա, այլ կոչեցէք մեր լեհական սովորութեամբ՝ Պաննա Ջոֆիա (օրիորդ Սոֆիա)։ Երբ հետս խօսողն այդ անունով է կոչում ինձ, ես աւելի սիրով եմ լսում նրան։

Որքան լիշում եմ, այս խօսքից լետոյ էր որ նրա հուր հայեացքին ես նոյնպիսի մի հայեացքով պատասխանելուց լետոյ գէմքիս վրայ, չը գիտեմ, ինչ մի նեար-

դային շարժում արի որ, նա դրանից քաշուելով՝ լանկարծ մարմար ձեռքը դրաւ աչքերիս և քնքօղ ձայնով ասաց.

— Այդպէս չեն նայել գթութեան քրոջը....

Ես այլ ևս յուզմունքիս դիմադրել չը կարենայով՝ լափշտակեցի նրա նուրբ, թաւշեայ ձեռքը և շրթունք ներիս սեղմելով, համբուրեցի ջերմագին:

— *Panie! co pan robi, pan się zapomina...* (պարոն, ինչ էք անում, դուք ձեզ մոռանում էք) բացազանչեց նա լեհերէն և ձեռքը խլելով՝ հեռացաւ ինձանից:

Բայց դեռ դրանը չը հասած՝ կանգ առաւ, հանեց գրպանից սուձեռն հայելին և մէջը նայելով ասաց.

— Տեսէք, շառագունել եմ, ինչ կասեն այժմ, եթէ այսպէս դուրս գամ, *aoh! jakis pan niegrzecny!* (ախ դուք անքաղաքավար) վերջացրեց նա խօսքը լեհերէն:

Այդ րոպէին նա այնպէս գեղեցիկ, այնպէս հրաշալի էր, որ նրա խօսքերը, եթէ մինչև իսկ լինէին հայհոյանք, ես դարձեալ կընդունէի սիրախօսութեան տեղ, ուր մնաց վերջին բացազանչութիւնը, որի մէջ աւելի մտերմական քնքշութիւն՝ քան վիրաւորանք կար:

— Պաննա Զոֆիա, ներեցէք որ ձեր սիրուն հայեացքին չը կարողացայ դիմանալ. ներեցէք որ համարձակուեցայ... ասացի ես:

— Դուք իմ հիւանդն էք, ես ձեզ ներում եմ... միայն թէ սա լինի առաջինն ու վերջինը, ապա թէ ոչ ես այլ ևս չեմ մտնել այստեղ, ասաց նա ու դուրս գնաց: Բայց հենց դռնով ելնելիս նա այնպէս ժպտաց, որ, կարծես, ասում էր. — «ուրիշ անգամ համբուրի՞ր աւելի ջերմագին»:

Եւ հենց այդպէս էլ ես արի, որովհետև հետևեալ այցելութիւնները քանի գնում, այնքան աւելի մտերմական էին դառնում:

Մի օր, երեկոյեան դէմ, երբ արևի շողերը փախուստ էին տալիս իմ սենեակի պատուհանից և նրանց փոխարէն՝ շփուում ապակիներին հովից շարժուող ծառի ոստերը, Պաննա Զոֆիան դիմացս նստած՝ լսում էր իմ մի հետաքրքրական պատմութիւնը, որ վերաբերում

էր, արդարեւ, զսլասանքի տրժտնի իմ մի քաջագործութեան: Իսկ հետեւեալն էր:

Կուրսկ քաղաքում գտնուած ժամանակ, հրաւէր ստացալ այդտեղի մի կալուածատիրոջից՝ ելէքտրական լուսաւորութիւն հաստատելու իւր կալուածքում, որը գտնուում էր Կուրսկից դէպի արեւելք գտնուող Բատ գետի վրայ: Այդտեղ պէտք էր գնալ դէպի Տիմ քաղաքը տանող խճուղիով: Կէս օրուայ մօտ էր, երբ մենք հասանք Բափին: Կամրջին մօտենալուց՝ գետափեայ թմբին տեսալ գիմնադիօնի երեք աշակերտուհիներ, որոնք մօտակալ ամարանոցաբնակներէց էին և եկել էին այդտեղ ծաղիկ ժողովելու: Բայց տեղն, ուր նրանք շրջում էին, վտանգաւոր էր. հողը կարող էր փլչել և նրանք երեքն էլ կը թափուէին գետը: Հենց այս մտքի մէջ՝ հրամայեցի կառապանին՝ շուտ հասնել կամրջին, որպէս զի աղջկերանց խորհուրդ տալի հեռանալ: Եւ, սակայն, իմ նախազգացումը յառաջեց զգուշութեանս: Հազիւ ձիաները ոտք դրին կամրջին, և ահա փլաւ գետափի այն մասը, որի վրայ կանգնած էր օրիորդներէց մեծը, որը և ճչալով սահեց դէպի վար: Միւս երկուսն իրենց տեսնելով անկարող՝ ընկերուհուն օգնելու, սարսափի աղաղակով լետ փախան դէպի դաշտը: Մինչդեռ ես իսկոյն ցատկեցի կողքից դէպի կամուրջը և տեսալ որ աղջիկը ոգորում է ջրերի հետ: Ել ժամանակ չըկար հանուելու: Շտապով ազատուեցալ վերնազգեստից ու կոշիկներէց և անմիջապէս ցած թռալ դէպի գետը: Աղջիկը, բարեբաղդաբար, քիչ լողալ գիտնալով՝ կարողացել էր մի քանի վայրկեան պահել իրեն ջրի վրայ. բայց հագուստն ամբողջապէս ողողուած լինելով պիտի սուզուէր շուտով ջրի յատակը: Սակայն, մինչև այդ՝ ես վրայ հասայ: Եւ որովհետեւ ինքս լաւ լուղորդ էի, ուստի որքան էլ հանգամանքներն աննպաստ, այսինքն որ ջուրը յորդացած էր, ափը՝ բարձրադիր և անկուռան իսկ մենք երկուսս հագուստով, այսուամենայնիւ, բաւական միջոց հոսանքի հետ կռուելուց յետոյ՝ վերջ ի վերջոյ աղջկան ափը հանեցի ողջ առողջ:

— Բռաւօ, գոչեց Սաբօրինը և ի նշան խրախուսանքի թոթուեց ընկերոջ ուսը:

— Ահա, հենց իմ պատմութեան այդ տեղում, շարունակեց լեհացին, մէկ էլ տեսայ պաննա Զօֆիան...

— Բայց ինչ եղաւ ազատուած աղջիկը, ընդհատեց ռուսն ընկերին:

— Ինչ պիտի լինէր, միացաւ ընկերուհիներին և շտապեց դէպի տուն ողողուած հագուստները փոխելու:

— Իսկ դու:

— Ես էլ, որ, ըստ սովորութեան, հետս փոխնորդ ունէի, հազայ այն հենց այնտեղ, իմ կառքի մէջ և ճանապարհս շարունակեցի:

Ինչ արաւ Պաննա Զօֆիան, այն ասացէք, հետաքրքրուեցայ ես:

— Հա, Պաննա Զօֆիան, որ սրտատրոփ լսում էր պատմութիւնս, որը ես, ի հարկէ, պատմում էի աւելի մանրամասնօրէն, այլ և համեմունք վիպական նկարագրութեամբ, հենց որ իմացաւ թէ՝ «երկար ոգուումները» լետույ, ես, «վերջի վերջույ», ազատեցի «վեշտասանամեայ» գեղեցիկ օրիորդին Րատի «կատաղի աղիքները», յանկարծ բացազանչեց մեր Սաբօրինի պէս՝

— Ապրես... ահա թէ ինչ երիտասարդի արժէ սրտանց սիրելը...: Եւ այս ասելով՝ խոնարհեց դէպի ինձ, առաւ գլուխս ձեռքերի մէջ և իսկույն էլ ճակատիս դրօշմեց մի շտապ ու ջերմ համբույր...:

Հիանալի... Հրաշալի... Այ թէ որտեղ է մեր առածն արդարանում՝ НѢТЬ ХУДА БЕЗЪ ДОБРА: Եթէ պայծիւնը չը պատահէր, թեւդ չէր վիրաւորուիլ. եթէ թեւդ չը վիրաւորուէր, հիւանդանոց չէիր մտնիլ. եթէ հիւանդանոց չը մտնէիր, Պաննա Զօֆիան քեզ չէր համբուրիլ. . Հիանալի է, հիանալի, բացազանչում էր Սաբօրինը հրճուանքով, առանց մտածելու թէ՝ այդ պատմութիւնն սկսուած էր իւր դժբաղդութիւնը հաստատելու նպատակով:

— Այդ օրից լետույ. շարունակեց լեհացին, սկսուեց մեզ համար սիրահարութեան երկրորդ և աւելի բուռն շրջան: Բայց դրա հետ միասին էլ ողջանում էր թեւս: Այժմ ես ոչ միայն կարողանում էի շարժել այն ազատօրէն, այլ և նրանով ջերմութեամբ գրկում էի իմ գթութեան քրոջը, որին՝ իւր համբուրից լետույ՝ չէի

անուանում այլ ևս Պաննա Զօֆիա, այլ ուղղակի Զօսիա, որ լեհերենի փաղաքականն է:

Երբ բժշկապետը յայտնեց թէ՝ թեւս արդէն առողջ է, ուստի կարող եմ մի քանի օրից թողնել Հիւանդանոցը. ես ուրախացայ թէպէտ այդտեղից ելնելուց՝ ես պիտի զրկուէի չքնաղ Զօսիային յաճախ տեսնելու բարեաղջութիւնից, այսուամենայնիւ, դրսումն էլ կային բարիքներ, որ ցանկանում էի վայելել:— Երկու ամիս էր՝ ինչ փակուած այդտեղ անշարժ ու անգործ, ծծում էի հիւանդանոցի ծանր ու անախորժ և դեղահոտերով տոգորուած օդը: Պէտք էր, վերջապէս, ազատուել նրանից, վայելել արևի լուսով ողողուած օդը և վերսկսել վաղուց ընդհատուած իմ աշխատութիւնը, որի մէջ ես միշտ աւելի էի գտնում թէ հանգիստ և թէ ուրախութիւն: Այդ իսկ պատճառով շատ չէի վշտանում սիրելի բարեկամուհուհուց անջատուելուն համար:

Սակայն վերջինս այդպէս չէր մտածում: Նա, որ սկզբում դէպի ինձ տածել էր միայն կարեկցութեան մի քնքոյշ զգացում, չէր իմացել, ի հարկէ, թէ դա վերջ ի վերջոյ պիտի փոխուէ սիրոյ, ինչպէս այդ պատահում է շատ ուրիշ կանանց, թէկուզ դրանք անցեալի հետ կապուած են լինում ուխտերով: Այդ պատճառով սկզբում երկիւղ չը կրելով՝ իւր մէջ հետզհետէ՝ դէպի ինձ աճող բարեկամութիւնից, թոյլ էր տուել զգացմունքներին՝ իշխել իւր վրայ և վերջը միայն տեսել որ արդէն խրճուած է սիրոյ ցանցերում...: Եւ որովհետեւ այդ դէպքում կանայք, համարեա, կատակ չեն սիրում, որովհետեւ մեզանից աւելի են հաւատում թէ իրենց և թէ մեր զգացմունքին, ուստի Զօսիան էլ որոշել էր՝ իւր սիրուն վերաբերուել լրջօրէն:

Իմանալով որ շուտով պիտի թողնեմ հիւանդանոցը, նա եկաւ ինձ մօտ և առաջին անգամից իսկ մի զարմանալի պարզութեամբ և մանկական հաւատով հարցրեց.

— Զէք տխրում արդեօք որ թողնում էք ինձ:

Ես, փոխանակ ճշմարիտ զգացմունքս յայտնելու, փոխանակ ասելու թէ՝ «թէպէտ ինձ համար շատ հաճելի էր՝ յաճախ ձեզ հետ տեսնուել և միշտ էլ ձեր

քաղցր զրույցները լսել, բայց որովհետև գործն ու աշխատութիւնը ինձ աւելի են գրաւում, ուստի շատ չեմ տխրում ձեզ թողնելուս համար», ընդհակառակն, իբրև մինն ան բազմաթիւ երիտասարդներից, որոնք, առհասարակ, թեթեամտութեամբ են վերբերում այս օրինակ սիրուն՝ համարելով այն պատահական զգացմունք, կամ նալում նրա վրայ իբրև՝ ուղեորութեան ժամանակ կայարաններում մատուցուող մի առձեռն բարիքի, որը կարող են վայելել ու անցնել, ուստի ես ևս առանց վարանելու պատասխանեցի.

— Օ՛, և ինչպէս եմ տխրում. այժմեանից արդէն սարսափում եմ՝ լիջելով ան ժամերը. որ պիտի անցնեմ առանց ձեզ:

— Եթէ այդպէս է, ուրեմն ես չեմ թողնիլ որ դուք այդպիսի ժամեր անցցնէք, ասաց նա յուզուած:

— Եւ ինչ պիտի անէք, հետաքրքրուեցայ ես:

— Ես չեմ սիրում առաջուց խօսել այն բանի մասին, ինչ որ պիտի անեմ. բայց արածս կը տեսնէք...: Այս ասելով նա գրկեց ինձ, համբուրեց և արագ դուրս գնաց:

Երեկոյեան դէմ Զօսիան նորից մտաւ ինձ մօտ. նրստեց կէս ժամի չափ և խօսում էր հետս կէս յուզուած, կէս ոգեւորուած և յաճախ յառում աչքերը վրաս այնպիսի մի հալեացքով, որն, ասես, լցուած էր լրեսով ու կրակով:

Հեռանալիս ասաց.

— Այս երեկոյ՝ ութերորդ ժամից յետոյ՝ երեք ժամուայ հերթապահութիւն ունիմ: Այն վերջացնելուց յետոյ՝ կը մտնեմ ձեզ մօտ:

— Ուշ չի լինիլ. հարցրի ես:

— Աւելի լաւ. պատասխանեց նա և խորհրդաւոր ժպիտով հեռացաւ:

— Սկզբում ես չի հասկացայ նրա միտքը. բայց յետոյ, կարծես, գուշակեցի և մի երանական ուրախութիւն ամբողջ էութիւնս գրաւեց:

Գիշերուայ 11-րդ ժամին, երբ հիւանդանոցում լուրթիւն էր տիրում, սենեակիս դուռը յուշիկ բացուեցաւ: Ներս մտաւ Զօսիան: Նա դուռը նորէն զգուշութեամբ

լետ դնելով շրջեց փականքը և մօտեցաւ ինձ: Քայլերից արդէն երևում էր որ նա յուզուած է: Երբ մօտեցաւ ճրագին, ես զարմացայ նրա դէմքի ալլալումը տեսնելով: Նրա այտերը շիկնած էին, մինչդեռ երեսն ու քունքերը՝ գունատ: Թւում էր թէ նա վախեցած է մի բանից, կամ հենց նոր ազատուած մի վերահաս վտանգից:

— Ի՞նչ է պատահել ձեզ, Զօսիա, հարցրի ես անհանգստութեամբ:

— Ոչինչ, ոչինչ... Ես սանդուխտներով բարձրացայ, այս նրանից է. շուտով կանցնի, ասաց նա և նստեց մահճակալիս վրայ այնպէս մօտիկ՝ որ ես ոչ միայն նրա շնչառութեան շօշափն էի զգում դէմքիս վրայ այլ և լսում էի սրտի բաբախումը:

— Բայց դուք շատ յուզուած էք, նկատեցի ես նորէն:

— Այդ նրանից է որ ես շտապեցի մի վայրկեան առաջ ձեզ գրկել, ասաց նա ժպտալով և իսկոյն էլ առաւ ինձ իւր թեւերի մէջ...: Եւ նրա յուզումը գնալով սաստկացաւ: Այդ յուզումը .. Օ՛, դա կատարեալ դրախտ էր. երջանկութեան մարմնացումն... Դա այն յուզումն էր, որ տիրում է կնոջ ամբողջ էութեանը, երբ նա որոշում է մի ծանր ու դժուարին, յաճախ, իւր կեանքի համար ճակատագրական՝ քայլ անելու: Զօսիան այդ քայլի վրայ էր: Նա մտել էր ինձ մօտ ոչ այլ ևս իբրեւ գթութեան քոյր, այլ իբրեւ անժոյժ սիրահար... Նա եկել էր ինձ երջանկացնելու, ինձ իւր անմեղութեան առաջին ծաղիկը նուիրելու...

Նշանակուած օրը ես ելայ հիւանդանոցից բոլորովին առողջ. իսկ մի քանի օր լետոյ թողեց իւր պաշտօնը Զօսիան, ինչպէս որ խոստացել էր ինձ և փոխադրուեց իմ բնակարանը, որ ամեն յարմարութիւն ունէր երկու մտերիմ սրտերի գգուանքն ու սէրը հետաքրքիր աչքերից ծածկելու»:

Երիտասարդը լռեց.

Վերջն ի՞նչ եղաւ, ամուսնացար նրա հետ, հետաքրքրուեց Սաբօրինը:

— Ոչ, չամուսնացայ. պատասխանեց լեհացին:

—Ինչո՞ւ: Մարդիկ ճրագով են պտրում այնպիսի
փանանց, որոնք կարողանային սիրել: Այդ կինն ապա-
ցուցել էր որ սիրում է քեզ:

—Այո, ապացուցել էր: Եւ հենց այդ պատճառով
էլ փափագում էի առնել նրան: Եւ թէպէտ հայրս մեռ-
նելուց առաջ կտակել էր ինձ՝ երբէք չամուսնանալ այն-
պիսի աղջկալ հետ, որն օրինական ճանապարհով այն է՝
պսակով ինձ հետ միանալուց առաջ, անձնատուր է ե-
ղել ինձ, որովհետեւ, ասել էր, այդպիսի աղջիկը, վերջ
ի վերջոյ դժբաղդութիւն կը բերէ քեզ—այսուամենայնիւ
Զօսիայի գեղեցկութիւնը, սիրոյ ջերմութիւնը և վեր-
ջապէս վերջին՝ հաւատով լի անձնութիւնը մոռաց-
նել տուին ինձ իմ հօր պատուէրը:—Ո՛ւր կարող եմ
գտնել սրանից արժանաւորը, ասում էի ես, ուստի և
որոշում առնել նրան ինձ կնութեան: Բայց, ինչպէս ե-
րևում է, հօրս հոգին արդէն հսկում է եղել իմ բաղ-
գին: Մի քանի ամիս ինձ հետ կենակցելուց յետոյ, նա
գնաց հայրենի քաղաքը՝ ծնողներին այցելելու և մեր
ամուսնութեան համար՝ նրանց համաձայնութիւնն առ-
նելու: Անցաւ երկու ամիս և բոլոր ժամանակ մենք
սիրալիր նամակներ էինք գրում իրար: Երբ հասաւ Զօ-
սիայի վերադարձի ժամանակը և ես յուսալից սպասում
էի նրան, ահա մի օր ստացալ մի հակիրճ նամակ, ո-
րով նա ինձ յայտնում էր թէ արդէն ընդունել է ա-
ռաջարկութիւնը մի զինուորականի, որի հետ և ամուս-
նանում է. ուստի խնդրում էր ինձ մոռանալ ամենը,
ինչ որ անցել է մեր մէջ...

—Ի՛նչ է ասում... զարմացաւ Սաբօրինը:

—Այո՛, այդպէս էր գրել, կրկնեց լեհացին:

—Եւ ամուսնացաւ:

—Հարկաւ:

—Զարմանում եմ:

—Բայց աւելի պիտի զարմանաս, եթէ ասեմ թէ՝
նա ամուսնացաւ այն զինուորականի հետ, որը որսի
ժամանակ սպանել էր իւր նշանածին...:

III.

— Օ՛, բարեկամ, քո այդ գթութեան քոյրը, իսկապէս, ֆուրիա է եղել. իզուր դու նրան օրինակ բերի՛ր՝ իմ սիրած օրիորդի ուխտը կասկածելի անելու համար, բացազանչեց ռուսը, կարծես հոգւով հանգստանալով:

— Չը գիտեմ. գուցէ քո սիրածը աւելի իդէալիստ լինի: Բայց ես, առհասարակ, չեմ հաւատում կանանց ուխտերին:

— Ես կը սովորացնեմ քեզ հաւատալ: Տեսնում ես այս նամակը—Սաբօրինը հանեց ծոցից մի ծրար և ցոյց տուաւ—սա իմ սիրեցեալի վերջին գրութիւնն է. այստեղ նա նշանակել է նոյն իսկ ժամանակը, երբ պէտք է ընդունուի «Սուրբ երրորդութեան» մէջ: Իսկ այդ միաբանութիւնը չէ նմանում քո տեսած հիւանդանոցին... Այդտեղից ելած քոյրերը մի մի սուրբեր են:

— Իսկ դու միջոց կունենաս հետեւել քո սուրբի կեանքի ընթացքին:

— Այդ պէտք էլ չէ. ես միայն կամենում եմ տեսնել նրան այժմ աշխարհից հեռացած, որպէս զի կարողանամ նրա ծնողներին ասել. —Ո՞նց է. կերձք. ինձ որ չը տուիք ձեր աղջկան, արդեօք նա ձեզ մնաց...: Ա՛յ, հենց դրա համար էլ գնում եմ այժմ Վարշաւ: Հօրեղբօրս որդուն խնդրած եմ դիմաւորել ինձ կայաւանում: Եթէ նա յայտնեց թէ՛ Մարին արդէն հեռացել է Վարշաւից, ես կառքս ուղղակի պիտի քշել տամ Միրովիչների տունը և այցետոմսս աջ կողմից դէպի վար ծալելով՝ ուղարկեմ վերև, ցոյց տալու համար թէ կարեկցելու և մխիթարելու համար է այցելութիւնս:

— Տարօրինակ վրիժառութիւն, նկատեց Եանը ծիծաղելով.

— Ամբերիկական տեսակի... յարեց Սաբօրինը և նոյնպէս կարկաչեց:

Նոյն երեկոյեան մենք հասանք Վարշաւ: Կայաւանում, արդարև, մեր ռուս ընկերոջը դիմաւորեց հօրեղբօր որդին, որը նրա պէս առողջ ու զուարթագէմ մէկն էր և հենց նրա պէս էլ խօսում էր բարձրաձայն:

Մեր ընկերոջ հարցին թէ՛ «Ինչ լուր ունիս Մարիից», նա պատասխանեց.

— Մարին արդէն գնաց:

— Գնաց... բրա՛ւօ. այդպէս էլ սպասում էի, ասաց Սաբօրինը և գոհութեամբ լի հայեացքը ուղղեց լեհացուն:

— Բայց գիտե՞ս ուր գնաց:

— Ինչպէս չէ, «Սուրբ երրորդութեան» միաբա...:

— Ո՛չ, նա գնաց արտասահման, ընդհատեց լրատուն:

— Ի՞նչպէս թէ արտասահման, զարմացաւ Սաբօրինը:

— Հապա՛. չէ որ նա՛ ամուսնացաւ:

— Ի՞նչ:

— Ամուսնացաւ:

— Ո՞ւմ հետ:

— Պօտեցկիի որդու:

Սաբօրինը տեղն ու տեղը սառաւ. նրա բերանը մնաց բաց. աչքերը չռած, իսկ կապոցներով բեռնուած ձեռքերը՝ կախուեցան օդում անշարժ:

— Գնանք, ինչո՞ւ ես կանգնել, խօսեց գիմաւորողը, տեսնելով որ ճամպորդները հետզհետե՛ խռնուելով՝ դէս ու դէն են հրում հօրեղբօրորդուն: Բայց վերջինս ապուշի պէս կանգնած՝ չէր լսում նրան:

— Հեռանանք, թող նա չիմանայ թէ մենք բոլորը լսեցինք... շէնչաց լեհացին ահանջիս և մենք կամացուկ խոյս տուինք կայարանից:

ՄՈՒԴԱՑԱՆ

(Վերջը հետեւեալ համարում)